Պատվավոր Հյուպատոսների Միություն
Union of Honorary Consuls
Союз Почетных Консулов

## ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### «ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն տեղեկանքն ամփոփում է վերջին հինգ տարվա ընթացքում ստորև նախանշված ոլորտներում առնվազն երեք տարվա գործունեության փորձն ու այդ ժամանակահատվածում իրականացված ծրագրերին /փորձագիտական աշխատանքներին, ձևավորված աշխատանքային խմբերին, ոլորտին առնչվող հարցերով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը/ վերաբերող ամփոփ տեղեկատվությունը:

***ՈԼՈՐՏ № 1. ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ճանապարհային երթևեկության անվտանգության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների պահպանման ապահովում, տրանսպորտային միջոցների պետական գրանցում և հաշվառում, հաշվառման համարանիշների տրամադրման հետ կապված հարաբերությունների կարգավորում:***

«Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպությունը, որը ներկայում միավորում է Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես հավատարմագրված շուրջ չորս տասնյակ հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց, ի թիվս իր կանոնադրական նպատակների և խնդիրների, հանդես է գալիս նաև այդ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը նպաստելու, նրանց կողմից ղեկավարվող հյուպատոսական հիմնարկների բնականոն գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում ապահովելուն ուղղված գործունեության դիրքերից՝ Հայաստանի Հանրապետության հեղինակությունն ու միջազգային վարկանիշի ամրապնդումն ու բարձրացումը գնահատելով գերակայություն: Եվ հենց այդպիսի գործունեության ընթացքում է, որ «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպությունը համագործակցային առնչություն է ունենում նստավայր պետության այն պետական կառավարման մարմինների հետ, որոնք իրենց իրավազորությամբ անմիջականորեն մասնակցություն են ունենում հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկների գործունեության կարգավորմանը: Այդ համատեքստում տեղին է անդրադառնալ ոստիկանության՝ ճանապարհային երթևեկության անվտանգության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների պահպանման ապահովման,

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Ամիրյան 18/3 • Հեռ.: +374 (10) 53 99 99; +374 (10) 54 99 99 • Էլ. փոստ info@kyrgyzconsulate.am
Республика Армения, 0010, г. Ереван, Ул. Амирян 18/3 • Тел.: +374 (10) 53 99 99; +374 (10) 54 99 99 • Эл. почта: info@kyrgyzconsulate.am
18/3 Amiryan Str., 0010, Yerevan, Republic of Armenia • Tel.: +374 (10) 53 99 99; +374 (10) 54 99 99 • E-mail: info@kyrgyzconsulate.am

տրանսպորտային միջոցների պետական գրանցման և հաշվառման, հաշվառման համարանիշների տրամադրման հետ կապված հարաբերությունների կարգավորման ոլորտում՝ 2024 թվականին ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախաձեռնված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի՝ «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշների հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի № 1853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի № 1041-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 1251-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկման կապակցությամբ «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր անդամների կազմից հատուկ աշխատանքային խմբի ձևավորման և դրա գործունեության ծրագրի մեկնարկին /հիմնավորող փաստաթղթերը կցվում են/: Միության աշխատանքային խմբի ամենօրյա մասնակցությամբ շուրջ երեք ամիս տևած նախագծի քննարկումն ի վերջո հանգեց վերջինիս ընդունմանը /ընդունվել է 30 մայիսի 2024 թվականին՝ ՀՀ կառավարության № 831-Ն որոշմամբ/: Աշխատանքային խմբում կայացած լայնածավալ փորձագիտական աշխատանքի արդյունքում, խմբի անդամների կողմից որոշման նախագիծը նախաձեռնողին, ինչպես նաև Միության լիազոր ներկայացուցչի կողմից՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում ներկայացվել են ավելի քան երեք տասնյակ առաջարկություններ /հիմնավորող փաստաթղթերը կցվում են/, որոնց գերակշիռ մասն ընդունվել է: ՀՀ ոստիկանության, արդարադատության և արտաքին գործերի նախարարությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ հիշատակված գերատեսչություններում կայացած բազմաթիվ քննարկումները՝ այդ թվում փորձագիտական շրջանակների ներգրավմամբ, որոնց ակտիվ մասնակցություն են ունեցել նաև «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները, թույլ են տվել բոլոր կողմերի կառուցողական երկխոսության մթնոլորտում կայացած շահագրգիռ քննարկումների արդյունքում ըստ ամենայնի բարելավել և կատարելագործել իրավական ակտի նախագիծը: Աշխատանքային խմբի փորձագիտական աշխատանքի համար հիմք են ծառայել ոլորտի իրավական ակտերի միջազգային փորձի խորքային ուսումնասիրությունները, որին մեծապես իր տեղեկատվական աջակցությամբ սատարել է Միության հետ տարիների համագործակցության փորձ ունեցող՝ «Հյուպատոսական կորպուսների և ասոցիացիաների միջազգային ֆեդերացիան»՝ FICAC-ը, կամ ինչպես ընդունված է կոչել «Հյուպատոսների համաշխարհային ֆեդերացիան» /ficacworld.org/, որը ՄԱԿ-ի կողմից ճանաչված միջազգային հասարակական կազմակերպություն է՝ ECOSOC-ի հատուկ կարգավիճակով:

«Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպությունը ներկայումս էլ շարունակում է իր ակտիվ մասնակցությունը իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում զետեղված՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածով՝ Ներքին գործերի նախարարության իրավազորությանը վերաբերելի հիմնական ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկմանը:

***ՈԼՈՐՏ № 2. ՀՀ Ներքին գործերի նախարարության միգրացիոն գործընթացների կառավարման, համակարգման և իրավիճակի մոնիտորինգի, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն մուտքի վիզաների տրամադրման, կացության կարգավիճակների տրամադրման, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացի, անձանց փաստաթղթավորման և նույնականացման, օտարերկրացիների կամավոր վերադարձի և արտաքսման, Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու հետ կապված հարաբերություններում տեղեկատվության փոխանակման հետ կապված հարաբերությունների կարգավորում:***

Ի թիվս «Հյուպատոսական կապերի մասին»՝ 1963 թվականի ապրիլի 24-ի կոնվենցիայով սահմանված՝ հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց վերապահված գործառույթների, վերոհիշյալ անձինք և իրենց կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկները մշտապես բախվում են խնդիրների, որոնք առնչվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հավատարմագրող պետությունների՝ օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուն, գտնվելու և բնակվելու օրինականությանը, բնակվելու ժամկետները խախտելուն և դրա հետևանքներին, պետական սահմանը հատելուն, կացության կարգավիճակ /ժամանակավոր, մշտական և հատուկ/ ստանալուն, կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումների քննարկման ընթացքում ծագող խնդիրներին, վիզային ռեժիմը խախտելու դեպքերին և դրա հետևանքով ծագող խնդիրներին, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու օրինական հիմքերի բացակայության դեպքում օտարերկրյա քաղաքացիների հարկադիր հեռացմանը՝ արտաքսմանը, նրանց սահմանված դեպքերում և կարգով հյուպատոսական հիմնարկների կողմից միակողմանի վերադարձի վկայական տրամադրելուն և այլն: Եզակի չեն դեպքերը, երբ Միությունը ներկայացնող հյուպատոսական հիմնարկների իրավազորության ներքո գտնվող օտարերկրյա քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում ենթարկվում են ձերբակալությունների, կալանավորման և նույնիսկ ազատազրկման: Սրանք այն խնդիրներն են, որոնց կարգավորման գործընթացում ծագող իրավահարաբերություններին «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպությունը ներկայացնող հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձինք և նրանց կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկներն անմիջական մասնակցություն են ունենում: Նշված ոլորտի հարաբերությունների կարգավորման ընթացքում հաճախ կարիք է առաջանում ոլորտի պետական լիազորված մարմինների հետ փոխգործակցության, անձանց փաստաթղթավորման և նույնականացման, անհրաժեշտ տեղեկատվություն հայթայթելու,

«Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպությունը ներկայումս էլ շարունակում է իր ակտիվ մասնակցությունը իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում զետեղված՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածով՝ Ներքին գործերի նախարարության իրավազորությանը վերաբերելի հիմնական ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկմանը:

***ՈԼՈՐՏ № 2. ՀՀ Ներքին գործերի նախարարության միգրացիոն գործընթացների կառավարման, համակարգման և իրավիճակի մոնիտորինգի, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն մուտքի վիզաների տրամադրման, կացության կարգավիճակների տրամադրման, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացի, անձանց փաստաթղթավորման և նույնականացման, օտարերկրացիների կամավոր վերադարձի և արտաքսման, Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու հետ կապված հարաբերություններում տեղեկատվության փոխանակման հետ կապված հարաբերությունների կարգավորում:***

Ի թիվս «Հյուպատոսական կապերի մասին»՝ 1963 թվականի ապրիլի 24-ի կոնվենցիայով սահմանված՝ հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց վերապահված գործառույթների, վերոհիշյալ անձինք և իրենց կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկները մշտապես բախվում են խնդիրների, որոնք առնչվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հավատարմագրող պետությունների՝ օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուն, գտնվելու և բնակվելու օրինականությանը, բնակվելու ժամկետները խախտելուն և դրա հետևանքներին, պետական սահմանը հատելուն, կացության կարգավիճակ /ժամանակավոր, մշտական և հատուկ/ ստանալուն, կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումների քննարկման ընթացքում ծագող խնդիրներին, վիզային ռեժիմը խախտելու դեպքերին և դրա հետևանքով ծագող խնդիրներին, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու օրինական հիմքերի բացակայության դեպքում օտարերկրյա քաղաքացիների հարկադիր հեռացմանը՝ արտաքսմանը, նրանց սահմանված դեպքերում և կարգով հյուպատոսական հիմնարկների կողմից միակողմանի վերադարձի վկայական տրամադրելուն և այլն: Եզակի չեն դեպքերը, երբ Միությունը ներկայացնող հյուպատոսական հիմնարկների իրավազորության ներքո գտնվող օտարերկրյա քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում ենթարկվում են ձերբակալությունների, կալանավորման և նույնիսկ ազատազրկման: Սրանք այն խնդիրներն են, որոնց կարգավորման գործընթացում ծագող իրավահարաբերություններին «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպությունը ներկայացնող հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձինք և նրանց կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկներն անմիջական մասնակցություն են ունենում: Նշված ոլորտի հարաբերությունների կարգավորման ընթացքում հաճախ կարիք է առաջանում ոլորտի պետական լիազորված մարմինների հետ փոխգործակցության, անձանց փաստաթղթավորման և նույնականացման, անհրաժեշտ տեղեկատվություն հայթայթելու,

փոխանակելու և այլն: Նման խրթին և պատասխանատու աշխատանքը հաճախ պահանջում է նախապես ձևավորված խորհրդակցական կարծիք, օպերատիվություն, տեղեկատվության, հմտությունների, գիտելիքի և փորձի փոխանակում, և որպես հենց այդպիսի անհրաժեշտ գործիքակազմի կիրարկման ձևաչափ է «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպության շրջանակում՝ փորձագետ-մասնագետների ներգրավմամբ գործող հատուկ հանձնաժողովի ներդրման ծրագիրը, որը մեկնարկել է դեռևս 2021 թվականին և հաջողությամբ գործում է առայսօր /հիմնավորող փաստաթղթերը կցվում են/: Հանձնաժողովն իբրև խորհրդակցական մարմին, խորհրդակցություններ է հրավիրում ըստ անխուսափելի անհրաժեշտության, թույլատրելի և համընդհանուր հասանելիության տեղեկատվության ու իրավիճակի քննարկման արդյունքում ձևավորում եզրահանգումներ, որոնք յուրաքանչյուր առանձին խնդրի կարգավորման համար հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձի գործողությունների համար ուղղորդող հիմք են ծառայում: Այս ոլորտում նույնպես, «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպությունը համագործակցում է «Հյուպատոսների համաշխարհային ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հետ, ստանում անհրաժեշտ տեղեկատվական-մեթոդական աջակցություն:

***Համառոտ տեղեկություններ դիմումատու անձի վերաբերյալ.***

**Բաբկեն Սեդրակի Սեդրակյան**

- «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահ
- Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհուրդ, Ռումինիայի մասնաճյուղ, մարդու իրավունքների դիտորդ
- «Միջազգային ոստիկանական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի փոխնախագահ
- ՀՀ ներքին գործերի նախարարության, ոստիկանության մարմիններում աշխատանքի /այդ թվում՝ օպերատիվ/ շուրջ 23 տարվա փորձ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ
- ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի անդամ /2018-2025թթ./

«Պատվավոր հյուպատոսների միություն» Հ/Կ
նախագահ՝
02.12.2025 թ.

Բ. Սեդրակյան